Արձանագրություն N 2.1

«ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

12 դեկտեմբերի 2018թ. ժ. 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նիստը նախագահող՝ Ս. Հասրաթյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հայրապետյան, Ա. Նազարյան, Ա. Եփրիկյան
Բացակայում է՝ Հ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Մանուչարյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության վերաբերյալ.

1.1 ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետին համապատասխան՝ Կոմիտեի կողմից ստացվել է հարցման մասին տեղեկատվություն, որի արդյունքում պարզվել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «Ա Ընդ Ա Ավտոհաուս» ՓԲԸ-ն, ունի 61000 (վաթսունմեկ հազար) ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետը՝ «Ա Ընդ Ա Ավտոհաուս» ՓԲԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկվել է ծանուցում՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, սակայն վերջինս չի ներկայացրել շտկված որևէ փաստաթուղթ:

2. Հանձնաժողովը որոշեց՝

2.1 Հիմք ընդունելով 1.1 կետը՝ անբավարար գնահատել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնել հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին՝ 1-4 չափաբաժինների մասով՝ «Մ ԲԻ Ռ» ՍՊԸ-ին, իսկ 4-5 չափաբաժինների մասով՝ «Օվնե» ՍՊԸ-ին:

2.2 Էլեկտրոնային եղանակով Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին, էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան:

2.3 Գնումները համակարգողին՝ ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն հանձնաժողովի նիստի արձանագրությունը ներկայացնել ստորագրման:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի՝ նիստը նախագահող՝ _____ Ս. Հասրաթյան

Անդամներ՝ _____ Ա. Հայրապետյան

_____ Ա. Նազարյան

_____ Ա. Եփրիկյան

Քարտուղար՝ _____ Լ. Մանուչարյան